# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

**«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/187» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի (28 դպրոցների համար)գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**ք. Երևան** **24.11.2025թ ժամը 11:00**

**Գնահատող հանձնաժողովի կազմը.**

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Ցոլակ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Մելքոնյան

**1. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.**

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/187» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ին՝ 2-րդ, 21-րդ, 23-րդ չափաբաժինների մասով և «Լայթս» ՍՊԸ-ին՝ 17-րդ չափաբաժնի մասով eauction.armeps.am համակարգի միջոցով 14.11.2025թ ներկայացվել են պայմանագիր կնքելու առաջարկներ և կնքվելիք պայմանագրերի նախագծերը, սակայն վերջիններս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (մինչև 2025 թվականի նոյեմբերի 21-ը ներառյալ) չեն ներկայացրել ստորագրված պայմանագրերը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ին՝ 2-րդ, 21-րդ, 23-րդ չափաբաժինների և «Լայթս» ՍՊԸ-ին 17-րդ չափաբաժնի մասով զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

1.3 Առաջնորդվելով սույն արձանագրության 1.2 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, գնման ընթացակարգը 2-րդ, 21-րդ, 23-րդ և 17-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

1.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ին և «Լայթս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագծեր:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

------------------------------ Հրանտ Մկրտչյան

------------------------------ Արման Երանոսյան

------------------------------ Ցոլակ Հակոբյան

------------------------------ Արսեն Մելքոնյան /քարտուղար/